ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Սույն թվականի մարտի 17-ին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը մասնակցեց Ազգային Ակադեմիայի նիստերի դահլիճում կայացած ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի լիագումար նիստին, որի ընթացքում ներկայացվեցին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի համակարգի հաստատությունների եւ աշխատակիցների տարեկան աշխատանքային հաշվետվությունները:

Ժողովին մասնակցում էին նաեւ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, վարչապետ Արմեն Դարբինյանը, Կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը, Մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանը: